

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Բաց դաս



Գայանե Կոստանյան

Կոտայքի մարզ, Ֆանտանի միջնակարգ դպրոց

Դասարան՝ 7-րդ

26.02.2016թ.

Տևողությունը՝ 45 րոպե

Առարկան՝ Ինֆորմատիկա

Դասի թեման՝ Ապահով համացանց (§4.3 Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան)

Դասից առաջ

Դասի նպատակը՝ համակարգված գիտելիքներ տրամադրել համացանցի, նրա արդյունավետ օգտագործման մասին, աշակերտներին օգնել համացանցում ճիշտ և անվտանգ որոնում կատարել:

Դասի խնդիրները՝

- **Կրթական**
Իմանա
ա) Համացանցի գաղափարը և օգտագործման հնարավորությունները,
բ) Համացանցային անվտանգության և էթիկայի համընդհանուր ճանաչում գտած կանոնները,
գ) Համացանցի վտանգները:
Տիրապետի Համացանցում անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ որոնման մեթոդներին:
- **Դաստիարակչական**
Գիտակցի համացանցում այդ կանոնների պահպանման անհրաժեշտությունը, Հարգի ցանցի օգտագործողների իրավունքները,
Կարողանա բավարար վարք ցուցաբերել թե՛ կյանքում և թե՛ համացանցում:
- **Ձարգացողական**
Կարողանա ճիշտ և անվտանգ, նպատակային որոնում կատարել համացանցում:

Հարցեր՝ նախագիտելիքների ախտորոշման համար

Անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ՝

Անհատական համակարգիչներ, պրոյեկտոր, տեսախցիկ, թվային ֆոտոխցիկ, գրատախտակ, գունավոր կավիճներ, կպչուն թերթիկներ, մարկերներ, պաստառներ, բուկլետներ, երեխաների առցանց անվտանգության ապահովման ուղեցույցներ, A1, A4 ձևաչափի թղթեր, PowePoint ծրագրով պատրաստված ներկայացում (презентация):

Դասի տիպը և կառուցվածքը

ԽԻԿ+Ա (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում և անդրադարձ)

Դասի մեթոդները և մեթոդական հնարները` մտազրոհ, դերային խաղ, T-աձև աղյուսակ m-աձև աղյուսակ:

Գրատախտակի ձևավորում, գնահատման չափանիշների ճշգրտում, ժամանակի բաշխում

Դասի ընթացքը

Քայլեր	Կատարվող գործողություններ	Ժամանակ	Ցուցադրում, մեթոդ
Քայլ 1	Կազմակերպչական աշխատանքներ` ա)աշակերտների մուտքը համակարգչային կաբինետ, բ)ներկա-բացակա	1 րոպե	
Քայլ 2	Աշակերտներին ներկայացնել դասի թեման, նպատակները, խնդիրները	2 րոպե	
Քայլ 3	Բանաստեղծություն	3 րոպե	
Քայլ 4	Ապահով Համացանցի միջազգային օրը	2 րոպե	
Քայլ 5	Անդրադարձ գիտելիքների առկայությանը (խթանում) Հարցեր` 1.Ի՞նչ է Համացանցը: 2. Ո՞ք տարիքից կարող եք մտնել համացանց: 3.Պե՞տք է թույլատրել ձեզ ունենալ ձեր անձնական էլեկտրոնային հասցեն: 4.Կարող եք արդյոք ստեղծել բլոգներ կամ մտնել այնպիսի սոցիալական ցանցեր, ինչպիսիք են Facebook-ը և Odnoklassniki-ը: 5.Կարող եք արդյոք կախվածություն ձեռք բերել համացանցից: 6.Ի՞նչ գիտեք համակարգչային վիրուսների մասին, և ովքե՞ք են են այն ստեղծում: «Հակեր» բառի ծագումնաբանությունը: (իմաստի ընկալում)	5 րոպե	մտազրոհ
Քայլ 6	Խմբային աշխատանք: Բեմականացում (իմաստի ընկալում)	10 րոպե	Դերային խաղ
Քայլ 7	Համացանցի հնարավորությունների ներկայացում (իմաստի ընկալում)	7 րոպե	
Քայլ 8	Համացանցային անվտանգության և էթիկայի համընդհանուր ճանաչում գտած կանոնների ներկայացում (իմաստի ընկալում)	5 րոպե	
Քայլ 9	Համացանցի դրական, բացասական և չեզոք կողմերի ներկայացում (կշռադատում)	3 րոպե	m-աձև աղյուսակ պաստառ
Քայլ 10	Թեստային աշխատանք	3 րոպե	
Քայլ 11	Գնահատում	2 րոպե	
Քայլ 12	Հանձնարարական	1 րոպե	
Քայլ 13	Անդրադարձ	1 րոպե	

Դասից հետո

1. Դասի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում (T-աձև աղյուսակ)
2. Պարզել ժամանակի բաշխման ճշտությունը
3. Պարզել՝ որքանով իրականացան դասի նպատակները
4. Դիդակտիկ նյութերի մատչելիության գնահատում
5. Մեթոդի կամ մեթոդների արդյունավետության գնահատում
6. Բացահայտել չիրականացվածի պատճառները: Ուղիներ փնտրել՝ շտկելու դրանք

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

Դասարանը նախօրոք կահավորել անհրաժեշտ պարագաներով: Գրատախտակին գունավոր կավիճներով գրել՝

- **Դուռդ փակ պահիր և հարևանիդ գող մի հանի:**
- **Յոթ անգամ չափիր և մեկ անգամ կտրիր:**
- **Փորձված թանը անփորձ մածունից լավ է:**
- **Մեկ ծաղկից օձը թույն է շինում, մեղուն՝ մեղր:**
- **Շաքարն անուշ ա, համա ամեն օր չի ուտվում:**

Քայլ 1. ա) Աշակերտների մուտքը համակարգչային կաբինետ, բ) ներկա-բացակա (1 րոպե)

Քայլ 2. Դասի թեմայի, նպատակների, խնդիրների հստակեցում (2 րոպե)

Քայլ 3. Բանաստեղծություն (3 րոպե)

ԱՌԱՋԱՂԴԱՆՔ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻՆ (Պարույր Սևակ)
Parodia (Հեղինակ՝ Գայանե Կոստանյան)

Հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ...
Հաշվեցե՛ք հապա ու թիվն ասացեք այն հակերների,
Որ ստեղծում են բազում վիրուսներ երկար տարիներ,
Եվ վիրուսների թիվն ասացեք հապա,
Կամ էլ՝ «կոտրված» էմաների,
Որ կարող էինք ունենալ կյանքում,
Բայց մենք չունեցա՞նք ու չե՛նք ունենա:
Թե չե՛ հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ...

Հաշվեցե՛ք հապա, թե մեր email-ով
Քանի անգամ ենք մենք հուսախաբվել,
Մեծ շահման մասին նամակ ստացել,
Կամ աշխատանքի լավ առաջարկով
Գայթակղվել ենք ու հիասթափվել:
Թե չե՛ հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ...

Կամ էլ հաշվեցե՛ք
Եվ թիվն ասացեք ա՛յն մանուկների,
Որ դարձան, ավա՛ղ, խաղերին գերի:
Մոռացան իրենց խաղընկերներին մանկության բարի
Ու դարձան ընկեր անվստահելի անձանոթների...
Թե չե՛ հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ...

Հաշվեցե՛ք նաև մի վերջի՛ն անգամ,
Ա՛յն թվականը նշեցեք հիմա,
Գեթ այն մոտավոր, մոտալուտ տարին,
Երբ կկործանի օրենքը չարին:
Ու մենք՝ բոլորս, մեծե՛ր, թե՛ փոքրեր
Էլ չենք վախենա մտնել ինտերնետ:
Թե չե՛ հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ եք, հաշվո՛ւ մ...

«Ապահով համացանցի» միջազգային օրը նշվում է 2004 թվականից յուրաքանչյուր տարվա երկրորդ ամսվա երկրորդ շաբաթվա երկրորդ օրը: Այդ տոնը նշվում է ավելի քան 100 երկրներում: Ծրագիրը Հայաստանում անցկացվում է 2009 թվականից, աշխատանքները կազմակերպում է Ապահով Համացանց Հայաստան նախաձեռնությունը: Համացանցն ապահով օգտագործելու նպատակով ամեն տարի Հայաստանի դպրոցներում անց են կացվում բաց դասեր, ծնողական ժողովներ: Այս տարի «Ապահով համացանցի» միջազգային օրը նշվեց փետրվարի 9-ին:

Քայլ 5. Մտազրոհ կամ Մտքերի տարափ մեթոդի օգնությամբ աշակերտները պատասխանեցին հետևյալ հարցերին՝

1.Ի՞նչ է Համացանցը: 2. Ո՞քուք տարիքից կարող եք մտնել համացանց: 3.Պե՞տք է թույլատրել ձեզ ունենալ ձեր անձնական էլեկտրոնային հասցեն: 4.Կարող եք արդյոք ստեղծել բլոգներ կամ մտնել այնպիսի սոցիալական ցանցեր, ինչպիսիք են Facebook-ը և Odnoklassniki-ը: 5.Կարող եք արդյոք կախվածություն ձեռք բերել համացանցից: 6.Ի՞նչ գիտեք համակարգչային վիրուսների մասին, և ովքե՞ք են են այն ստեղծում: **(խթանման փուլ)**

«Հակեր» բառի ծագումնաբանությունը: **(5 րոպե):**

Հակերը (անգլ. *to hack* - վնասել, հատել) չափազանց բարձր որակավորում ունեցող մասնագետ է, անձ, ով խորապես տիրապետում է համակարգչային համակարգերի աշխատանքին: Սկզբնական շրջանում հակերներ անվանում էին այն ծրագրավորողներին, ովքեր շատ արագ և հաճախ ոչ կոկիկ ձևով ուղղում էին ծրագրային ապահովման մեջ առկա սխալները: Այդպիսի ուղղումները ասոցացվում էին «կացնի աշխատանքի» հետ նրանց կոպտության պատճառով: Այստեղից էլ առաջացել է հակեր բառը:

Համացանցի **վտանգները** ներկայացնենք դերային խաղի միջոցով:

Քայլ 6. Դերային խաղ՝ **(10 րոպե):**

Դերային խաղից մեծ օգուտ քաղելու համար պետք է առաջակվող իրավիճակները հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Մեթոդի կիրառումից հետո քննարկման առարկա է դառնում ոչ թե մասնակիցների ընդունակությունները, այլ՝ վարքը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս մասնակիցներին հասկանալ, թե ինչ են զգում մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների:

Նախօրոք թղթերի վրա գրել դերերը՝ հակերներ (**Կրեկեր, Ֆրիկեր, Զվարճախոս, Ցանցային հակեր, Պրոֆեսիոնալ կոտորող, Վանդալ, Ծրագրավորող 1, Ծրագրավորող 2, Ծրագրավորող 3, Ծրագրավորող 4**): Դերերը բաշխել վիճակահանությամբ: Քանի որ դասարանը բաղկացած է 14 աշակերտից, 4 աշակերտ կմնա դիտորդ: Դասարանի մի հատված նախօրոք ֆետրով բաժանել երկու մասի: Մի մասում պետք է նստեն հակերները, մյուսում՝ ծրագրավորողները: Դերերը բաժանելուց հետո հակերները դրեցին համապատասխան անվանումներով դիմակները:

Uցենար

Մրահ 1-ին, շրջանաձև նստած են հակերները:

Վանդալ

-Տղե՞ք, բա չեք ասի, այս մի շաբաթվա ընթացքում «կոտրել» եմ 500 համակարգչային համակարգ, ստեղծել եմ 25 վիրուս և «տրոյական ձիեր»:

Պրոֆեսիոնալ կոտորող

-Իսկ ես այդ նույն ժամանակում «կոտրել» եմ 800 համակարգչային համակարգ, տվյալներն այնպես եմ փոփոխել, որ նույնիսկ համակարգիչների տերերը չճանաչեցին իրենց համակարգիչները:

Ցանցային հակեր

-Ես էլ «կոտրել» եմ մի շարք հիվանդանոցների շտապ օգնության ներքին ցանցը և խանգարել հիվանդներին այցելելու գործընթացը:



Տրիկեր

-Դրանից քեզ ինչ օգուտ, դեռ մի բան էլ ուրախանում ես: Կարող է այդ հիվանդների մեջ քո հարազատներից, ընկերներից լինի: Ա՞յ, ես, ուրիշ, արտերկրում ինչքան ծանոթ, բարեկամ ունեմ՝ բոլորին անվճար զանգել եմ, ժամերով խոսացել՝ «կոտրելով»

հեռահաղորդակցման համակարգերը:

Կրեկեր

-Ես էլ այնքան ծածկագրեր եմ գողացել, որ հաշիվն էլ եմ կորցրել: Կրեդիտ քարտերով բանկոմատներից այնքան փող եմ յուրացրել, որ չեք էլ պատկերացնի: Մարդկանց ուղարկել եմ մեծ շահման մասին հայտարարություններ: Շատերը հավատացել են և ընկել ծուղակս: Ա՞յ միամիտներ, ինչի համար պիտի շահեիք... Մյուսներին էլ հայտնի ընկերությունների կողմից գայթակղիչ առաջարկություններ եմ արել: Մեր մեջ ասած՝ մարդիկ շատ միամիտ են:

Զվարճախոս՝

-Տղերք, բայց դուք ի՞նչ վտանգավոր եք: Ես միայն «կոտորում» եմ համակարգչային համակարգեր, լուրջ վնաս չեմ հասցնում, պարզապես տեղադրում եմ հումորային տարբեր նկարներ, ստեղծում տեսաձայնային էֆեկտներով վիրուսներ: Այսինքն՝ կատակ եմ անում: Իմ

նպատակը հայտնի դառնալն է: Հիշու՜մ եք Հերոստրատին, որ մ.թ.ա. 356 թ. հուլիսի 21-ին այրեց Արտեմիսի տաճարը: Դատավորի հարցին, թե ինչու է այրել, նա պատասխանեց.

-Ուզեցի հայտնի դառնալ:

Նրա անունն արգելվեց արտաբերել: Սակայն նա հիշվում է մինչև այժմ:

Մրահ 2-րդ

Նտած է չորս ծրագրավորող:

Ծրագրավորող 1

-Երեկ գիշերը մի թույն հակավիրուսային ծրագիր եմ ստեղծել: Հաստատ լրիվ վիրուսների հախից կգա: Անունն էլ որոշել եմ «Invincible»՝ Անպարտելի դնել:

Ծրագրավորող 2

-Ես էլ իմ ընկերոջ հետ ուսանողների և աշակերտների համար Համացանցից անվտանգ օգտվելու էլեկտրոնային ձեռնարկ եմ ստեղծել՝ **«Անվտանգ համացանց»:**

Ծրագրավորող 3

-Օնլայն ֆորում եմ ստեղծել, որտեղ կպատասխանեմ համակարգչին վերաբերվող ցանկացած հարցի:

Ծրագրավորող 4

-Ինձ երեխաներն ավելի շատ կսիրեն, որովհետև հետաքրքիր խաղ եմ ստեղծել, որից նրանք կստանան թե՛ հաճույք և թե՛ գիտելիքներ: Այնպես որ, տղաներ, բոլորս էլ բարի գործ ենք արել և միշտ կանենք:

Քայլ 7. Համացանցի հնարավորությունների ներկայացում՝

(7 րոպե):

Ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց Համացանցի:

Համացանցը և Համաշխարհային Ոստայն հասկացությունները շատ հաճախ նույնացվում են, սակայն դրանք հոմանիշներ չեն:

Համացանցը գլոբալ ցանցերի միավորում է, իսկ **Համաշխարհային սարդոստայնը (World Wide Web կամ WWW)** համակարգ է, որը հնարավորություն է տալիս օգտվել Համացանցին միացված համակարգիչներում պահպանվող էլեկտրոնային փաստաթղթերից:

Համացանցը տարբեր մարդիկ կիրառում են տարբեր նպատակներով: Սակայն, ընդհանուր դեպքում, այն կիրառվում է՝

- հետաքրքիր և օգտակար ինֆորմացիայի ստացման համար,
- լայն հնարավորություններ սովորելու համար,
- շփման և հաղորդակցման,
- խաղային գործունեության,
- վաստակի աղբյուր (արդար և անարդար ճանապարհներով):

Համացանցում պահպանվող հսկայածավալ ինֆորմացիան մարդկանց հասանելի դարձնելու համար կիրառում են հատուկ ծրագրեր՝ **բրաուզերներ**, որոնցից հաճախ կիրառում են **Mozilla Firefox, Opera, Google Chrome, Internet Explorer, Safari, Netscape Navigator** և այլն:

Հեղինակ

Երկար հաշվելուց հետո համակարգիչները գտան, որ չարին կործանելու օրն եկել է: Այն համընկավ «Ապահով համացանցի» միջազգային օրվան՝ 2016 թվականի փետրվարի 9-ին: Ֆետրը քանդում ենք: Հակերները և ծրագրավորողները միանում են միմյանց, ձեռք են սեղմում և

խոստանում են համագործակցել, իրենց գիտելիքները միավորել և օգտագործել միայն լավ նպատակների ծառայեցնելու համար, մարդկանց համար միայն բարիք գործելու նպատակով:

Հակերներից ոչ մեկը չպատժվեց, որովհետև նրանք բոլորը խոստովանեցին իրենց մեղքերը և խոստացան այլևս նման արարքներ չգործել:

Տրամադրելով անսահման և աննախադեպ հնարավորություններ՝ համացանցը պարունակում է նաև բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար:

Քայլ 8. Համացանցային անվտանգության և էթիկայի համընդհանուր ճանաչում գտած կանոնների ներկայացում (5 րոպե):

- Առանց ծնողների թույլտվության որևէ անձնական ինֆորմացիա (նշանաբան, անուն-ազգանուն, հեռախոսի համար, հասցե, դպրոցի համար և այլն) մի՛ հայտնեք Համացանցի ձեր նոր ծանոթներին:
- Եթե շփոթեցնող ինֆորմացիա էք ստանում կամ հայտնվում էք երկրնտրանքի առջև, մի՛ փորձեք ինքնուրույն գլուխ հանել. դիմեք ծնողների կամ ուսուցիչների օգնությանը:
- Համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց եթե, այնուամենայնիվ, որոշել էք հանդիպել նրան, ապա գնացեք ծնողների հետ:
- Մի՛ բացեք այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ Web էջը, որը ստացել էք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:
- Բացի ընտանիքի անդամներից՝ ոչ մեկին մի վստահեք ցանց մուտք գործելու ձեր նշանաբանը. դա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:
- Համացանցում մի՛ տեղադրիր քո կամ ընկերներիդ կիսամերկ լուսանկարներ. դու կարող ես դառնալ ինտերնետային մոլագարների զոհ:
- Զգույշ եղիր հեռախոսի համարները կամ լուսանկարները այլ մարդկանց տրամադրելիս: Լուսանկարները կարող են փոխանցվել ցանկացած մարդու, ինչը քեզ կդարձնի խոցելի:
- Մի՛ պատասխանիր վիրավորական հաղորդագրություններին, քանի որ այն խթանում է հետապնդումը:
- Արգելափակիր այն մարդկանց հեռախոսահամարները, ում հետ չես ցանկանում շփվել:
- Խորհրդակցիր ծնողներիդ կամ ուսուցիչներիդ հետ նախքան համակարգչային ծրագրեր տեղադրելը և ինչպես նաև այն դեպքերում, երբ վտանգ կա, որ կարող ես վնասել համակարգիչը կամ խոցելի դարձնել ընտանիքի անվտանգությունը:
- Զրուցարաններում գրանցվելիս գաղտնի պահիր անձնական տեղեկություններդ:
- Օրինակելի վարք դրսևորիր համացանցից օգտվելիս և մի ձեռնարկիր ապօրինի կամ այնպիսի գործողություններ, որոնք կարող են վնասել այլոց:
- Մշտապես պահպանեք Համացանցային անվտանգության կանոնները. դրանք ստեղծվել են, որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և անկաշկանդ զգաք:

Վերոհիշյալ բոլոր դեպքերում հետևեք հետևյալ խորհրդին.

Շուրջօրյա Թեժ գիծ ծառայություն

Հարգելի բարեկամներ, Համացանցում ոչ պատշաճ կամ կասկածելի բովանդակության հանդիպելիս ահազանգեք Շուրջօրյա Թեժ գիծ ծառայությանը: Ձեզ անհանգստացնող հարցերի պատասխանները ստանալու համար գրեք Թեժ գիծ ծառայությանը:

Հեռախոս՝ **60 272 212**

Safe.am

Քայլ 5, 6, 7, 8-ը **իմաստի ընկալման** փուլերն են:

Հուսանք, որ հակերների և ծրագրավորողների միավորվելուց հետո Համացանցի անվտանգության կանոններն այլևս պետք չեն լինի, սակայն էթիկայի կանոնները պահելը միշտ էլ պետք է...

Ինտերնետային էթիկայի 10 պատվիրաններ

1. Համացանցում աշխատելիս սովորեք հարգել այնտեղ ընդունված օրենքները. դրանք կարող են տարբեր լինել, կախված հաղորդակցման միջավայրից: Ծանոթացեք համապատասխան տեղային կանոններին՝ նախքան առաջին հաղորդագրությունն ուղարկելը:
2. Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշեք, որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար՝ թանկ:
3. Հետևեք ուղղագրության և քերականության կանոններին:
4. Եթե բանավեճի ընթացքում կրքերը բորբոքվել են, ապա վարվեցողության թույլատրելի նորմերը չխախտեք նույնիսկ այն դեպքում, երբ դիմացինը ձեզ դրդում է դրան:
5. Հարգանքով վերաբերվեք այլոց կարծիքին և սեփականությանը: Եթե ցանկանում եք ցանցում մնալ չճանաչված, ապա ընդունեք, որ ձեզ հետ հաղորդակցվողը ևս ունի այդ իրավունքը: Ձեզ հղված ինֆորմացիան մի հրապարակեք՝ առանց ուղարկողի թույլտվությունը ստանալու:
6. Հարգեք գիտականների խորհուրդները և ինքներդ էլ գիտելիքներով օգնեք այլոց:
7. Ցանցում մի չարաշահեք ձեր ազդեցությունը. վստահություն ձեռք բերելը դժվար է, կորցնելը՝ հեշտ:
8. Չմոռանաք, որ Համացանցի միջոցով դուք, ի վերջո, շփվում եք մարդու հետ, և նրան էլեկտրոնային ուղերձ առաքելիս աշխատեք բովանդակությամբ չվիրավորել նրան:

9. Համացանցով հաղորդակցվելիս հետևեք էթիկայի այն բոլոր կանոններին, որոնցով առաջնորդվում եք առօրյա կյանքում:

10. Անկախ նրանից, թե այլոք պաշտպանո՞ւմ են ցանցում հաղորդակցվելու էթիկայի կանոնները՝ դուք անշեղորեն հետևեք դրանց:

Քայլ 9. Համացանցի դրական, բացասական և չեզոք կողմերի ներկայացում (3 րոպե):
(կշռադատման փուլ)

m-աձև աղյուսակ

Դրական	Չեզոք	Բացասական

Տե՞ս պաստառը:

Քայլ 10. Թեստային աշխատանք (3 րոպե)

Բանավոր լուծել <http://www.safe.am/esafetykit/start.html> կայքի թեստը:

Քայլ 11. Գնահատում (2 րոպե)

Գնահատվեցին այն աշակերտները, ովքեր ակտիվորեն մասնակցեցին Համացանցի առավելությունների և թերությունների ներկայացմանը, թեստային աշխատանքին:

Քայլ 12. Հանձնարարական (1 րոպե)

Հանձնարարվեց տանը ծանոթանալ <http://safe.am/ar/faq.html> տեղակայված ինֆորմացիային (դասի խթանման փուլի հարցերի պատասխաններին) և կարդալ Հովհաննես Թումանյանի «Կացին ախպեր» հեքիաթը՝ հաջորդ դասին քննարկելու համար:

Քայլ 13. Անդրադարձ (1 րոպե)

Անդրադարձ (ռեֆլեքսիա)

1. ներկա-բացակա
2. դասի թեմայի, նպատակների, խնդիրների հստակեցում
3. բանաստեղծություն
4. հարցեր
5. Համացանցի հնարավորությունների ներկայացում
6. դերային խաղ
7. Համացանցային անվտանգության և էթիկայի համընդհանուր ճանաչում գտած կանոնների ներկայացում

8. Համացանցի դրական, չեզոք և բացասական կողմերի ներկայացում
9. թեստային աշխատանք
10. գնահատում
11. հանձնարարական
12. Անդրադարձ

Դասից հետո T-աձև աղյուսակով ներկայացնել դասի ուժեղ և թույլ կողմերը:

T-աձև աղյուսակ

Ուժեղ	Թույլ
դասի նպատակների իրականացում	գործնական աշխատանքի (համացանցում որոնման աշխատանքներ) համար ժամանակի սղություն
աշակերտների ակտիվ մասնակցություն	
Համացանցի մասին նրանց գիտելիքների որոշակի առկայություն	
դերային խաղում իրենց դերը լավ հասկանալ	
դիդակտիկ նյութերի մատչելիություն	
մեթոդների և մեթոդական հնարների ճիշտ ընտրություն	

